

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԱՄՍԻԱՑ ՔՐՈՆԻԿ

Տաճկառակերի մասնակցութիւնը կաթողիկոսական ընտրութեան մէջ, Ղարաբաղի թեմի ընտրութիւնները, Վերընտրութիւններ Թիֆլիսում:

Տաճկառակերի մասնակցութեան խնդիրը ներկայ կաթողիկոսական ընտրութիւնների մէջ մինչ վեստրաւր ամիսը մնացել էր կատարեալ անլավտութեան մէջ: Ազդ մանաւանդ տարօրինակ էր, որ Տաճկառակերը աւելի շատ ձախներ ունին կաթողիկոսական ընտրութիւնների գործում, քան ռուսահանքերը, քանի ու Տաճկառանում կան 45 կամաց ազմական թեմեր, մինչդեռ Ռուսաստանը ունի միայն 6 թեմ, Պարսկաստանը Հնդկաստանով՝ 2 թեմ: Խակ բարոնի է որ 1836 թւականի Պոլստենիէլով ամեն մի թեմ ունի մի աշխարհական և մի հոգեորական պատգամաւրի ձախն: աշխարհական պատգամարրը ընտրում է ժողովլորից, խակ հոգեորական պատգամաւրը հէնց լնդը թեմական առաջնորդն է: Հետևապէս Տաճկառանը իւր 45 թեմերով մասնակցում է 45 աշխարհական և 45 հոգեորականների, ուրեմն միասին 90 ձախներով, ռուսահանքերը 12 ձախնով, Պարսկաստանը Հնդկաստանի հետ 4 ձախնով: Դոցա վերալ աւելանում են Սինոդի 8 անդամների և կամաց միաբանութեան կողմից 7 ձախն: Ասել է թէ կաթողիկոսական թեկնածուների ընտրութեանը մասնակցում են 90+12+4+8+7=121 ձախներ թեմերից, կամաց մի Միաբանութիւնից և Սինոդից: և, ինչպէս տեսնում ենք, ազդ 121 ձախների մէջ Տաճկառանը իրաւունք ունի մասնակցելու 90 ձախնով, որ նունն է թէ համարեա 12 ձախնից իննը Տաճկառանին են: Արդ, ի բնէ Տաճկառանի և Ռուսաստանի մէջ տարածակնութիւն է եղել Տաճկառանը մասնակցութեան ձեմ մասին: Պոլստենիէն ռուսաց օրէնք է, որը սակալն ունի մի ջագակ ալին օրէնքի ընաւորութիւն, քանի որ նա վերաբերում է ազ և ազ պետութիւնների հպատակներին և ոչ միայն ռուսաց հպատակներին: Արդ, միջազգակին օրէնսդրութիւն սահմանել կարելի է միայն համաձայնութեամբ բոլոր ան պետութիւնների,

որոնց հպատակներին վերաբերում է ալդ օրէնքը, Մինչդեռ 1836 թւականի Պոլոժենիկն տրւած է միա կողման ի կերպով, հետևապէս նա չի կարող պարտաւորիչ լինել Տաճկաստանի հայերին, որոնք Պոլոժենիկն տեղ ունին իրանց Սահմանադրութիւնը, որը Տաճկահայերի Պոլոժենիկն է, և որովհետև ալդ Սահմանադրութիւնն էլ մըջազգալին օրէնք չէ, ալլ միայն տաճկական, ուրեմն մի ներքին և ուրիմն միկողմի (Տաճկաստանի) օրէնք է, հետևապէս նա պարտաւորիչ չի կարող լինել Ռուսաստանի համար և գժւարութիւնը ծագում է հէնց նրանից որ Սահմանադրութեան ալի կէտը, որը խօսում է կաթողիկոսական ընտրութեան ձեի մասին, Պոլոժենիկի համապատասխան կէտից տարրերում է, չաճկահայերը պըճդում էին որ, համաձան իրանց Սահմանադրութեան, իրանք պէտք է մասնակցեն ոչ թէ ամեն մի թեմից լատուկ դորա համար ընտրւած պատգամատրների մըջոցով, ալլ որոշմամբ իրանց Ազգային ժողովի, որը ներկայացուցիչ է բոլոր տաճկահայերի և որ իրանք, տաճկահայերը, չեն կարող առանց իրանց օրէնքը խախտելու՝ վարւել մի ալլ պիտութեան օրէնքով, իսկ Ռուսաստանը իւր կողմից չի համաձայնում ալս խնդրում համակերպութեան տաճկական օրէնքներին:

Ալդ հանգամանքից միշտ խնդիր է ծագել տաճկահայերի մասնակցելու եղանակի մասին, մի խնդիր որ մինչ օրա էլ առկափ է մնացնել, բայց որը անկասկած պէտք է աշխատել միջազգալին օրէնքով լուծել, որպէս զի անորոշութիւն չը տիրէ ապագալում, Անցեալ 1881 և 1885 թւականների ընտրութիւններին, գժւարութեան դէմք առնւեց հետևեալ եղանակով. վիխանակ անձամբ մասնակցելու, տաճկահայերը, Ազգային ժողովի վճռի համաձան, ուզարկեցին եռանում մի ցուցակ իրանց որոշած կաթողիկոսացուների, որպէս զի էջմիածնում գումարւած ժողովը, բարգելով տաճկահայերին, ալդ եռանուն ցանկը ընդունէ, ամելացնելով իւր կողմից մի չորրորդի անուն. և ովքեր ալդ չորակից ժողովում ամենից շատ ձաներ կ'ըստանան և ում որ երկու ամենաշատ ձաներ ստացածներից ոռուաց թագաւոր-կալսորը կը հաստատէ—տաճկահայերն էլ կ'ընդունեն որպէս օրինաւոր կաթողիկոս էջմիածնում գումարւած ժողովը՝ լարգեց ալդ առաջարկութիւնը, բայց կարող էր նաև չընդունել ալն եռանուն ցանկը որ ուզարիւած էր և. Պոլսից, ծիչդ է որ ազգախի մի երկպառակութեան հետևանքները անհաշմելի կը լինէին, և հէնց ալդ է որ ստիպեց էջմիածնի կաթողիկոսական ժողովին ընդունել տաճկահայերից առաջարկած տօնական անձնութեան մասին:

Ռուսահայերիս մէջ կաթողիկոսական ընտրութեան ալն ձեւը, որ որոշած է Պոլոժենիկով, աւելի ժողովրդական է եղել. և նուն իսկ անկափ օրէնքի պահանջներից, ոռուահայերը միշտ աշխատել են որ տաճկահայերը թեմական պատգամատրների միջոցով անձամբ մասնակցեն կաթողիկոսական ընտրութիւններին և ոչ թէ ալդ գործը կատարեն Պոլսի ազգային ժողովի միջոցով. Բայց ալդ պահանջը որ, ոռուաց օրէնքի պահանջը լինելով, աւելի

համապատասխան է կաթողիկոսական ընտրութեան ոգուն, միմիան ալս անդամ իւր ներգործութիւնը ունեցաւ թիւրքիանակերի և թիւրքիակի կառավարութեան վերաւ, որովհետեւ, ինչպէս ընթերցաները շուտով կը ունեն, ալս անդամ անտեղ վճռւած է որ ամեն մի թեմից դան էջմիածին մի մի աշխարհական և մի-մի հոգմերական պատգամաւոր:

Ահա զնում եմ ազտեղ և. Պոլսի պատրիարք Խորէն արքեպիսկոպօս Աշրգեանի հրանազը, լուծ թիւրքիակի բոլոր հալոց թեմական առաջնորդ-ներին, Ազդ գոկումնուր ներկալացնուու է հետաքրքրութիւն ոչ միան իւր ամբողջութիւնով, ալլ և իւր մանրամասնութիւններով:

Այնչպէս գիտէք, առնենան Հարոց Հալլապետին Տ. Տ. Մակարակ առաջնու վախճանմամբ թափուր կը մնայ Արարատեան Մալր Աթոռն ի գահակալէն իւրմէ, և ըստ առնմաննեալ կարգադրութեանց, ներկաւ 1892 տարու մայիս ամսու Յ-րդ օրը տեղի պիտի ունենաւ ի Ս. Էջմիածին՝ Սրբոց Հօրն մերու Գրիգորի Լուսաւորչի արքանամառանդ լաջորդին ընտրութիւնն աղջումին, և հետևարարի ինչպէս միւս վիճակներն, սովորէս և ձեր վիճակն հրափրեալ է մասնակցիլ սուն ընտրութեան ի ձեռն եկեղեցական և աշխարհական երկուց պատգամատրաց, որոց մին էք դուք իրը ներկալացուցիչ համան հոգմերական դասու վիճակիդ, և միւսն՝ աշխարհական՝ ընտրելի է շաշխարհականաց իրը ներկալացուցիչ նոցին:

«Արդ, ներկալինալ առաքելով ձեզ էջմիածնի Սինոդին կողմէ լանուն վիճակիդ առաջնորդութեան ուղղեալ հրափրագիրն, ի մասնակցութիւն ընտրութեան, կը լանձնարարենք իստ հասու լինելու անոր պարունակու. թեանն՝ առանց լապաղման ձեռնարկիլ գործադրութեանն, և կը հաղորդենք ձեզ ձեռ հետևեալ կարմոր գիտելքներն,

առ) Նախ քան զամնանան հարկ է, որ վիճակիդ գաւառական ժողովն զումարէք ի նիստ և կարմորն զեկուցանելով՝ ըստ ինասուի ո. Սինոդի ծանուցագրին հրափրէք կրօնատիրական ջերմուանդ ուղւով և առանց անձնական որուն է նկատմանց՝ աշխարհական պատգամատրն ընտրելու

բ) Վասն զի ընտրելի պատգամատրն ի զիմաց վիճականոց պիտի մասնակցի Հալլապետի ընտրութեան, հարկ է որ ընտրմալ լինի ըստ ամենանի արքանամատրոք իւր ընկերակին դիրքովը պատւաւոր, վստահելի, բարերացած, ուղղամբ և միան եկեղեցաւ փառաց և օգտին նախանձալնիր:

ադ) Պատգամատրին ընտրութիւնն անդի ունենալէ իստու պէտք է տեղեկագիր մը պատրաստուի ընտրեալն ծանօթացնող, ստորագրեալ զաւառական ժողովու անդամոց և ձեր կողմէ և միանդաման ընտրութիւնը ծանուցուի ընդ փութ աղբալին պատրիարքարանիս:

աղ) Ալս գործողութիւնէն լիսու, պէտք է պատրաստուիք ընկերակցութեամբ աշխարհական պատգամատրին՝ ժամանակին մնենելու համար ի ո. Էջմիածին, ուր պէտք է անվրէալ ներկաւ գտնվիք մայիսի Յ-րդ օրն, որ

է օր ընտրութեան ընդհանրական հալրապետին. Զեր մեկնումն պէտք է ծանուցանէք պատրիարքարանիս:

(ա) Անհրաժեշտ պայման չէ ի վիճակինոց ընտրել անպատճառ պատգամաւրն, ալ կրնակ ընտրվիլ ալ ուր բնակեալ ազգալին ոք՝ որ ոճենակ արժանեաց հանդամանքն ըստ բ-բդ լողածուր կրնան նաև լանձնվիլ սոյն պաշտօնն ուրիշ վիճակի կողմէ արդէն ընտրեալ պատգամաւրի մը:

(աշ) Եթէ արգելք մը պատահի և չը կարողանաք ընտրութեան օրն, որովհեալ ժամուն անձամբ ներկակ գտնվիլ ի ո. Էջմիածին, ունիք իրաւունք ձեր կողմէ եկեղեցական ներկապացուցիչ մը կարգելու և ժամանակին առաքելու զախ անդ, ընդ աշխարհական պատգամաւրին, իսկ եթէ անակնունելի դիպւածաւ կամ պատճառաւ իւփք կարելի չը լինի ոչ ձեր հոգնոր ներկապացուցին և ոչ աշխարհական պատգամաւրին անձամբ ներկակ գտնվիլ անդ նշանակեալ օրն, ընտրութեան ժամուն, լանժամ դուք և աշխարհական պատգամաւրն իրաւունք ունիք դրով լատանելու ո. Սինոդին ձեր կարծիքն, թէ զորն նկեղեցականաց ազգիս արժանաւր կը համարէք հալրապետական վեհաստիճան իշխանութեան:

(աէ) Կարմոր է գիտենալ որ բացակատ պատգամաւրաց գրաւոր կարծիքը կ'ընդունի միան կաթողիկոսական ընտրութեան նախնական գործողութեան պահուն, լորում ներկակ պատգամաւրաց ձալնն և բացակալից դրաւոր կարծիքն լուելէ և ամփոփելէ վատու՛ ըստ առաւելութեան ձանից ընտրելի կը հանդիսանան չորեքին աւագագոյնք. Իսկ վերջին ընտրութիւնն տեղի կ'ունենակ միան ներկակ գտնուղ պատգամաւրաց ձալնիւ և ալ և բացակալից կործիքն չը կրնար ընդունիլ և ի հայրւ առնվիլ.

«Ուստի պատգամաւրաց անձամբ ներկապութիւնն ընտրական վերջին գործողութեան պահուն՝ անհրաժեշտ է կատարելապէս մասնակցած լինելու համար ընտրութեան».

«Յանձնելով ուրեմն ալս գլխաւոր կէտերն ձեր մասնաւոր ուշադրութեան՝ կը հրաւիրենք ըստ պարտճակութեան ո. Սինոդի հրավրագրուն և շրջարերական գրաւս հարկ եղած գործողութիւնները կատարել փուլով և ամենայն խնամով, որպէս զի կարենաք ընդհանրական հալրապետի ընտրութեան մասնակցելու ձեր իրաւունքն գործադրել, լողուս և ի փառս Հալաստանեաց Ս. Նեկեղեցւու և հալրապետական սուրբ իշխանութեան».

«Խորէն պատրիարք Կ. Պոլսու (10 փետրար 1892)»

Ընթերցողների ուշադրութիւնն եմ զարձնում ալդ շրջարերականի ալս կէտերի վերաւ, ալն Է՞ օր 1) թեմական պատգամաւր կարող է ընտրմել ոչ միան թեմի ծխական (թուրքիակամ գաւառական ժողովի) երես փոխանձներից, ալ և գրսից. 2) մի անձ կարող է թեմական պատգամաւրը ընտրել նաև երկու (արդեօք և աւելի ?) թեմներից (Ակրնակ նաև լանձնվիլ սոյն պաշտօնն ուրիշ վիճակի կողմէ արդէն ընտրեալ պատգամաւրի մը). 3) Էջմիածնի ժողովից բացակարող պատգամաւրները, լինեն նոքա աշ-

խարհական թէ հոգեսորական, իրանց դրաւոր ձախով կարող են մասնակցել չորս կաթողիկոսացուների ցւցակը կազմելում, բայց չեն կարող գրաւոր ձախով մասնակցել վերջնական քէարկութեան:

Արդեօք շրջաբերականի ալդ կէտերը համաձափ են ո. Ախնողի տւած հրահանդին և ուրմին ընդհանուր են նաև մեզ համար, ալդ չգիտեմ, Յամենահն դէպս պէտք է ասած որ Պոլսի Հալոց պատրիարքարանը աւելի որոշ շրջաբերական է ուղարկել առաջնորդներին, քան կժմիածնի Ախնողը՝ մեր թեմանրի առաջնորդներին: Եթէ ո. Ախնողը նորնքան որոշ հրահանդ լինէր տւած, Ղարաբաղի թեմական պատգամաւորի ընտրութիւնը, որ նշանակւած էր ալս փեարարի 14-ին, չէր խանզգարկվլ ալս հարցի պատճառվ, թէ արդեօք դրաից մարդ կարող է ընտրմալ թէ ոչ, Որպէս երևում է Պոլսի պատրիարքի շրջաբերականին, թեմական պատգամաւոր կարելի է ընտրել ներսից թէ գրսից, ոմ որ կամնան:

Ղարաբաղի թեմական պատգամաւոր ընտրմը հրավիրւած ծխական երեսփախների ժողովը զբաղւած է եղել երկու մկրդնական խնդիրներով. 1) կարելի է արդեօք որ մի քանի երեսփախներ իրանց ձախով մէկին հաւատան, և 2) կարելի է արդեօք թեմական պատգամաւոր ընտրմէ նաև ոչ ալդ ժողովի անդամներից: Առաջին խնդիրը կարուցմէ է այն առիթով որ, ի միջի ալլոց, նույսւակ վիճակի 12 ընտրւածները իրանց ձախերը հաւատացած են եղել նոցանից մէկին, անպէս որ ալդ մէկը պէտք է իրը թէ 12 ձախն ներկալացնէր: Առաջին խնդիրը կարուցմէ է առաջնորդները իշխանութիւնը ալդ հարցի վերաս, բայց ես գտնում եմ, որ ընտրողական մկրդունքին հակառակ է թով տալ որ մի անձն, մանաւանդ երբ նա ինքը չի ընտրւած ալս դէպքում 12 եկեղեցական-ծխական ժողովուներից, կարողանաւ 12 ժողովուների անունից խօսել: Եթէ միւս 11 ընտրւածները չեն ուղեցել իրանք օգտմել ալս հաւատից, որ իրանց ընտրւած ժողովուները ունեցել են դէպի նոցա, ալդ միան նշանակում է թէ ալդ ընտրւածները խոստովանում են իրանց անարժան լինելը ժողովունի հաւատը վագելու հնական է ուրեմն, որ մի հոգի չպէտք է ալս դէպքում ներկալացնից համարի 12 հոգու: ալդ անթուլատմելի է:

Բայց ալլ խնդիր է թէ արդեօք կարող են գրաւոր կերպով իրանց ձախով ուղարկել ընտրւած ծխական երեսփախները, թէ ոչ, Աս աւելի բարդ խնդիր է, քան առաջինը, Պէտք է կարծել, որ երբ մի ժողովունք մէկին ձախաւոր է ընտրում, ալդ անում է նա այն համոզմունքով որ նա մի որոշ գեր կատարէ թեմական ընտրութեան գործում, համաձափ նորան ընտրած ժողովունի տրամադրութեան ունենալ ալս և ոչ այն մարդուն որպէս կաթողիկոս: Ալդ զերը մի ձախաւոր կարող է կատարել նաև հեռափից, գրաւոր կերպով, միան այն ժամասուն, երբ նա հաստատ իմանում

լինի թէ ովքեր են առաջարկելու թեկնածուներ թեմական պատգամաւորութեան համար, և եթէ արդ թեկնածուների անունների հետ կապված են որոշ կաթողիկոսացուների անունները. Արդ արդ պայմանը չի կարող կատարել տան անդամ, քանի որ դա մեծ մասամբ նոյն խոկ ժողովի մէջն է որոշումը Ընդհանուր առամանը ուրեմն, նպատակալարմար ընտրութիւններ կարելի է կատարել աւելի այն զէպքում, երբ ձախաւորը ժողովամն է և ոչ երբ հեռվց է զրաւոր ձախ տալիս:

Բայց արդ տեսակէտը չի կարող միակ վճռողական լինել արդ խնդիրը լուծելու համար. Ծխական ամեն մի երեսփոխի ձախը շատ փոքր նշանակութիւն ունի ընդհանուր ընարողական գործում. ամբողջ Խուսաստանում ընտրած են թերեւս մինչ 300 ծխական ձախաւորներ Յ թեմական պատգամաւորներ ընտրելու համար, ալինքն մի ձախաւոր ունի միջին թողլ 1/10-երրորդական ձախն. և որովհետև մը թեմական պատգամաւորը էջմիածնի ժողովի մէջ ունի ընդհանուրի միան մօտ հարիւրերորդ ձախը, ուրեմն մի ծխական երեսփոխի նշանակութիւնը կաթողիկոսական ընտրութեան գործում հաւաաար է 1/2000 շատ անհան մասին, հարելի է արդոք պահանջել այս զէպքում այն խստութիւնը, որ ամեն ձախաւոր ինքը անձամբ ներկատ գտնվի պատգամաւոր ընտրելու ժողովին? Աս կարծում եմ որ աղքան խստութիւնը ներկատ զէպքում ամելորդ է և արդ տեսակէտից պէտք է թողլ տալ որ ձախ կարելի լինի նաև զրաւոր կերպով տար. Արդ տեսակէտը գործնականի վերատ է հիմնում, մանաւանդ մի երկրում, ուր հաղորդակցութիւնը ալճքան էլ հետ չէ և մանաւանդ աժան չէ, նթէ մնաք չնք ուզում որ զիսաւոր քաղաքներից հեռու վիճակները ծախքերից վախենալով տափառած լինեն ընտրել ծխական երեսփոխիները այն զիսաւոր քաղաքների ընակիչներից, և ուրեմն եթէ ուզում ենք որ արդ հեռու վիճակներում ժողովրդին իրան ծանօթ մարդիկ ընտրեն, ապա ես կարծում եմ որ պէտք է թողլ տալ թեմական պատգամաւոր ընտրելու գործում նաև զրաւոր կերպով գործել:

Ղարաբաղի թեմում լարուցած միւս խնդրի վերակ ծանրանալ չարժէ. շատ բնական է որ ժողովականները պարտաւոր չեն միան իրանց միջից ընտրել, ազ կարող են ընտրել պատգամաւոր և սորա կանդիդատ ում և ցանկանան:

---

Խմ անցեալ տեսութեան մէջ ես խօսեցի կաթողիկոսական-ծխական ընտրութիւնների մասին թիֆլիսում, միանգաման անտես առնելով այն լամառ կերպով կրկնող լուրը, թէ իբր Թիֆլիսի թեմական առաջնորդը անվաներ է համարել փետրարի 2-ին կատարած ընտրութիւնները Ա. Լուսաւորիչ և էջմիածնեցոց, ուրեմն երկու եկեղեցիներում. Բայց բանից երեաց, որ արդ լուրը ստորդ էր, այնպէս որ վիստրարի 23-ին ծխական ընտրութիւններ

կատարմացին ոչ միայն այն երկու եկեղեցիներում, ուր ընտրութիւններ գեռ ևս չէին կատարմացիներու և այն վերը լիշտած երկու եկեղեցիներում, ուր ընտրութիւնները արդէն կատարւած էին:

Դէ այժմ ես ամելորդ չեմ համարում վիճելի դարձրած խնդրի մասին մի երկու խօսք ասել, քանի չեղած անդից խնդրի է ծագել, խնդրից էլ գործ և մինչև անդամ լուրջ գործ, որը թերեւս եղակի է մեր եկեղեցական տարբերութեան մէջ:

Ահա թէ ինչումն է խնդրը, Փետրուարի 2-ի ընտրութիւններից իւսով, թենիւական առաջնորդին երկու լիշտած եկեղեցիների ծխականների մի մասի կազմից բողոք է գտում, թէ իբր աղդ ընտրութիւնների ժամանակ զեղծումներ են կատարել. և ահա նոքա խնդրում են որ աղդ երկու եկեղեցիներում ընտրութիւնները նորից կատարեն:

Բայց փատը սա է, որ աղդ նոյն եկեղեցիներում կատարւած ընտրութիւնները օրինաբոր են ճամաչել նոյսա նախագահող քահանաները, որոնք և ստորագրել են ընտրութեան թուղթը, որպէս ստորագրել են նաև ընտրող ծխականների ահազին մեծամասնութիւնը. Լուսաւորիչ եկեղեցու ծխականներից բոլորներ եղել են ընդունուլ երկու հոգի, իսկ էջմիածնեցոց եկեղեցուց մինչ 70 հոգի, թողնենք մը առժամանակ թէ ինչ բարուական և իրաւական արժեք սանէին աղդ բողոքները. ես կը վերադառնամ դրան. բայց կարենոր է իմանալ, որ նոյն աղդ եկեղեցիների ծխականները և մի քանի հարիւր աղդ մարդիկ, որոնք աղդ ընտրութիւնները քանդելուց վաստինանքներ էին նախատեսնում, հարկ համարեցին դիմուլ էջմիածնի Սինոդին. Այժմ մինք հաստատ գիտենք, որ Սինոդը հասմանել էր Թիֆլիսի սրբ. առաջնորդին աղդ երկու եկեղեցիների ընտրութեան վերաբերեալ թղթերը իրան ուղարկել նոյսա քննելու համար և վերընտրութիւններ առաջման ըլ կատարել: Բայց սրբ. առաջնորդը, ուղարկելով թղթերը էջմիածնին, կարգադրեց կատարել վերընտրութիւններ աղդ երկու եկեղեցիներում, աղդ մասին բատարաբեկով սեղական մի քանի թերթերում:

Ականեղ գաղափարների շփոթութիւն կալ որ պէտք է պարզել, նթէ Սինոդը ուղղակի՛ միջամտէր ընտրողական գործերի մէջ և ինքը ուղենար կարգադրել ընտրութիւնների գործը, նշանակելով ընտրութիւնների օրերը, և ընտրելու եղանակը,—աղդ կը նշանակէր առաջնորդի զվարի վրալով ուղենալ գործել: Այդ կը նշանակէր ուղղակի միջամտել առաջնորդի գործերի մէջ այն իրաւոնքների սահմանում, որոնք օրէնքով թէ աւանդութեամբ թեմական առաջնորդներին են լատակացրւած: Բայց Սինոդը ներկաւ դէպքում ամեննեին աղդքան հնուռն չի դնացել: Սինոդը ընդունելով մի քանի հարիւր ընտրողների ստորագրութիւններով մի բողոք թեմական առաջնորդի դէմ ուղեցել է խմանալ թէ որքան հիմնաւոր են այն զեղծումները: որոնց վերաէ հիմնելով թեմական առաջնորդը քանդել է ուղում կատարւած ընտրութիւնները: Զէ թէ բարձրագուն հագեոր իշխանութիւնը վերջ

ի վերջու պատասխանատու է ժողովրդի իրաւունքների համար, և նա չի կարող չը հսկել որ այդ իրաւունքները չը խախտենի, իսկ օրինաւոր ընտրութիւնը քանդել—այդ նշանակում է վիրաւորել ժողովրդին. արդ, օրինաւոր է եղել թէ չէ—ահա թէ ինչ է ուզեցել իմանալ Ցեղակալը և Սինողը. եթէ սինողը համոզէր թէ ընտրութիւնները օրինաւոր են կատարմալ, բայց ո. առաջնորդը անու ամենախիւ չի բարգել կատարւած եղելութիւնը, ապա ընական է որ և բարձրագոյն հոգեոր իշխանութիւնը չէր կարող սառնասրուութեամբ վերաբերել դէպի հարիւրաւոր մարդկանց բողոքը, քանի որ ներկաւ դէպքում բողոքը ուղղած էր առաջնորդի դէմ, մի իրաւունք, որ չի կարելի ժողովրդից խլեր.

Ինձ հաստատ լավանի չէ փետրաւարի 2-ին ընտրութիւնների դէմ թեմական առաջնորդին տած բողոքների բովանդակութիւնը երկու և կեղեցիների տժգոն ծխականների կողմից Օրինակի համար «Նոր-Դարս»-ը սասափիկ բողոքեց Ս. Լուսաւորիչ և կեղեցում փետրաւարի 2-ին կատարւած ընտրութիւնների դէմ, թեմական առաջնորդը բարգեց երկու բողոքողների խնդիրը նորից ընտրութիւններ նշանակելով այդ եկեղեցում և և ինչ զուրա եկաւ Ան, որ փետրաւարի 23-ին ընտրութիւններին Ս. Լուսաւորիչ և կեղեցում ժողովուրդը չհամաձայնեց երկրորդ անդամ ընտրութիւն կատարել, Եջմիածնցոց եկեղեցում, ուր փետրաւարի 2-ին մասնակցեցին ամելի քան 150 հոգի ծխականներ, նոյն «Նոր-Դարս»-ը պաշտպանեց բողոքողների դատը և հետևանքը այն եղաւ, որ փետրաւարի 23-ին նոյն ազդեկեղեցում կատարեց վերընտրութիւն 19 թէ 18 հոգու մասնակցութեամբ, մինչդեռ 97 հոգի ծխականներից ստորագրեցին մի այլ թուղթ, ուր բացատրւած է իրանց չմասնակցելու շարժառիթը. Միթէ պարզ չէ, որ եթէ բոլոր ներկաւ եղող ծխականները մասնակցէին այդ վերընտրութեանը, ընտրւածները նոյնը կը լինէին ինչ փետրաւարի 2-ին?

Տեսէք թէ ինչ լաիշտակութեամբ են ընդունում և կրկնում նորա Կավեաթ լրագրի ակ մի լուրը, իրը թէ Մելլանի Ս. Գէորգ և կեղեցու ընտրութիւնների դէմ էլ բողոքներ են պատրաստում տալ, Զի նշանակում ալդ արդեօք խաղ խաղալ ժողովրդի հետ?

Կաթողիկոսական-ծխական երեցիունների լրացուցիչ ընտրութիւնները թիֆլասում,

Փետրաւարի 26-ին ընտրւեցին.

Մէջյանի ո. Գէորգ եկեղեցում՝

Պ. Պ. Արշակ Բաղդասարեանց,  
Կարապետ Բարսամեանց,  
Ալեքս. Խուդաւերդեանց.

**Նաւթլուխի ս. Գեղրդ եկեղեցում՝**  
**Արշակ Տէր-Դրիգորեան**  
**Յովհ. Ապենդերեան**  
**Յովհ. Լոռիս-Մելքոնան, բժ.՝**

**Թիֆլիսի թեմի գործակալութիւններում ընտրածներն են հետեւալ-**  
**ները.**

**Ախալցիսալում՝**  
**Տէր-Դրիգորեան,**  
**Բուղուղեան.**

**Ախալքալաքում՝**  
**Զ. Առւանեան,**  
**Ա. Դրիգորեան.**

**Գորիում՝**  
**Յովհ. Այիսանեան,**  
**Բժ. Զ. Տէր-Մինասեան,**

**Աղնալիում՝**  
**Գէորդ Բաշինջաղեան,**  
**Յակոբ Փիրալեան.**

**Դուշեթում՝**  
**Մզարէուկեան,**  
**Յովհ. Մարտիրոսեան.**

**Շուշաւերում՝**  
**Ա. Պառաւեան,**  
**Տէր-Պօղոսեան.**

**Թելաւում՝**  
**Թաթուղեան,**  
**Շահվերդեան.**

**Ջալալ-օղլում՝**  
**Խան. Աղեան,**  
**Տէր-Դավթեան.**

**Վաղախի առաջի մասում՝**  
**Յ. Ալիսաննեան,**  
**Գհներալ Վարչամնան.**

**Վաղախի երկրորդ մասում՝**  
**Յ. Տէր-Աստուածատրեան,**  
**Խնժեններ Նարալեան.**

**Գանձակում՝**

Ն. Տէր-Ներսէսեան,  
Բժ. Թևմուրեան:

**Սուխումում՝**

Կարապ. Կամսարական,  
Գէորգ. Մուլադեան:

**Քութավիսում՝**

Յ. Մուլադեան,  
Ա. Շատուրեան:

**Արդւինում՝**

Ա. Ազնառուրեան,  
Մ. Ազնառուրեան:

**Կումիսում՝ առաջին անգամ՝**

Լեռն. Ղորղանեան,  
Նիկ. Տէր-Ղեռնդեան:

**Երկրող սնգամ՝**

Արշակ Սպարագետեան,  
Դաւիթ Դաւթեան:

**Թուապսէում (Սև ծովի շրջան)՝**

Ցովհաննէս Ռոտինեանց,  
Համբարձում Էնֆիանեան:

**? բարեկարգութիւնից՝**

Ցովհաննէս Բաղալեան,  
Արզուման Վարդանեան:

Մարտի 8-ին կալացած թիֆլախի թեմի պատգամատը ընտրելու ժողովի մասին ընթերցողներին զղում եմ ներկալ համարի վերջը:

ԼՈՒՍԻՆԻ